ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2025 թվականի N 1028-Ա

ԿԱՄՈ ՌԱՖԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2024 թվականի դեկտեմբերի 5-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 9-ին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024PK9QTF) և հողամասի սեփականատեր Կամո Ռաֆիկի Վարդանյանի 2025 թվականի դեկտեմբերի 9-ի N 6157 դիմումը. **որոշում եմ՝**

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թահիրով գյուղի Մ. Խորենացու փողոցի թիվ 18 հասցեում գտնվող, Կամո Ռաֆիկի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-094-0090-0010 կադաստրային ծածկագրով՝ 520.8 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 3.95 քառակուսի մետր մակերեսով պարիսպը և 1.64 քառակուսի մետր մակերեսով պարիսպը՝ համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «Կարեն Մաչանյան» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր ինքնակամ բնակելի տան համար կազմում է 2316 Հայաստանի Հանրապետության դրամ, 1 քառակուսի մետր պարսպի համար կազմում է 1389.6 Հայաստանի Հանրապետության դրամ: Վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 1 221

709 (մեկ միլիոն երկու հարյուր քսանմեկ հազար յոթ հարյուր ինը) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Թահիրով գյուղի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ

2025 թ. դեկտեմբերի 29
գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2025 թվականի N 1029-Ա

ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, 79-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացի Խաչիկ Գարապետի Մանջիկյանի 2025 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 6107 դիմումը և Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 170-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Որպես նվիրաբերություն ընդունել քաղաքացի՝ Խաչիկ Գարապետի Մանջիկյանի /այսուհետ՝ Նվիրաբերող/ սեփականություն իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական 2344291, տրված՝ 2007 թվականի հունվարի 19-ին/՝ ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի, Այգեկ գյուղում գտնվող՝ 04-009-0108-0139 կադաստրային ծածկագրով 1.94 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասը (այսուհետ՝ գույք) որպես ճանապարհ օգտագործելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) ապահովել Նվիրաբերողի հետ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նվիրաբերության մասին պայմանագրի կնքումը,

2) նվիրաբերության մասին պայմանագրի կնքման հետ կապված ծախսերն իրականացնել Նվիրաբերողի միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման փաստաթղթում կատարել համապատասխան լրացում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 29
գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2025 թվականի N 1030-Ա

ԽԱՉԱՏՈՒՐ ԽԱՆԱՂՈՎԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2025 թվականի դեկտեմբերի 8-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի նոյեմբերի 20-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023N8TLH3), Խաչատուր Խանաղովի Մանուկյանի 2025 թվականի դեկտեմբերի 9-ի N 6167 դիմումը՝ **որոշում եմ՝**

1. Օրինականացնել Խաչատուր Խանաղովի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի Անի թաղամաս 3 շենքի N 8 բնակարանին կից՝ 35.15 քառակուսի մետր մակերեսով ինքնակամ կցակառույցը՝ համաձայն «ՊԻԿԵՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր կցակառույցի համար կազմում է 590,7 Հայաստանի Հանրապետության դրամ:

Վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 20 763,10 (քսան հազար յոթ հարյուր վաթսուներեք Հայաստանի Հանրապետության դրամ տաս լումա):

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի 900325176155 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Բնակարանին տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մուսալեռ, Անի թաղամաս, 3-րդ շենք 8 բնակարան (ծածկագիր 04072XDYCJEZ):

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ

2025 թ. դեկտեմբերի 29
գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2025 թվականի N 1031-Ա

ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով «Սաֆարյան Ստանիսլավ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2025 թվականի դեկտեմբերի 24-ին տրված հողամասի բաժանման սխեման և հողամասի սեփականատեր Էմիլյա Շավարշի Եղիազարյանին 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 6471 դիմումը. **որոշում եմ՝**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ Էմիլյա Շավարշի Եղիազարյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-094-0111-0021 կադաստրային ծածկագրով հողամասի կողմ 1-ին՝ (Առանձնացվող հատված 1) 0.02962 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Գ. Էմինի փողոց, 15 հողամաս:

2.Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին՝ (Առանձնացվող հատված 2) 0.02938 հեկտար մակերեսով հողամասին տրամադրել հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Գ. Էմինի փողոց, 15/1 հողամաս:

3.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 29
գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2025 թվականի N 1032-Ա

ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 37-րդ կետով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 80-րդ և 138-րդ կետերով, ***որոշում եմ.***

1. Վավերացնել Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի ներքին աուդիտի 2026–2028 թվականների ռազմավարական ծրագիրը համաձայն՝ N 1 հավելվածի:
2. Վավերացնել Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի ներքին աուդիտի 2026 թվականի տարեկան ծրագիրը՝ համաձայն N 2 հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 29
գ. Փարաքար

Հավելված 1
ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար
համայնքի ղեկավարի 2025 թվականի
դեկտեմբերի 29-ի թիվ 1032-Ա որոշում

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ

Ծրագրի առաջին տարի՝ **2026 թվական**
Ծրագրի վերջին տարի՝ **2028 թվական**

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Փարաքարի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը կազմվել է համաձայն «Ներքին աուդիտի մասին» օրենքի, ներքին աուդիտորների վարքագծի կանոնների, ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների, Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումների, Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցների և Փարաքարի համայնքապետարանի ներքին աուդիտի կանոնակարգի:

2. Փարաքարի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը հանդիսանում է աուդիտի երեք տարվա պլանավորման փաստաթուղթ:

3. Այն հանդիսանում է Փարաքարի համայնքապետարանի ներքին աուդիտի գործունեության և զարգացման հիմնական փաստաթուղթը, որում նկարագրվում է աուդիտի նպատակներին արդյունավետ կերպով հասնելու համար ընտրված աուդիտի միջոցները:

4.Ռազմավարական ծրագիրը ղեկավարվում է Փարաքարի համայնքապետարանի երկարաժամկետ նպատակներով և ներքին աուդիտի ոլորտում սահմանված ռազմավարական զարգացման խնդիրներով: Ռազմավարական այս ծրագրի հիման վրա մշակվել է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը:

5.Ռազմավարական ծրագիրը և դրա փոփոխությունների նախագծերը քննարկվում են Փարաքար համայնքի ղեկավարի հետ:

6.Ներքին աուդիտորի պարտականություններ կատարողի կողմից հաստատված ռազմավարական ծրագիրը և դրա փոփոխությունները վավերացվում է Փարաքար համայնքի ղեկավարի կողմից և ենթակա է վերանայման առնվազն տարեկան մեկ անգամ: Ռազմավարական ծրագիրը հաստատվելուց հետո ներկայացվում է Լիազոր մարմնին՝ ի գիտություն:

II. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Ներքին աուդիտը անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ է, որն ուղղված է Փարաքարի համայնքապետարանի գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը: Այն աջակցում է Փարաքարի համայնքապետարանին հասնել իր նպատակներին՝ ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:

8. Փարաքարի համայնքապետարանի ներքին աուդիտորի պարտականություններ կատարողի առաքելությունն ու խնդիրներն են.

1) օժանդակել Փարաքարի համայնքապետարանին լինել հաշվետու ողջ հանրության առջև՝ գնահատելով վերջիններիս կողմից օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և իրականացված գործառույթների օգտավետությունը և արդյունավետությունը,

2) օժանդակել Փարաքար համայնքի ղեկավարին՝ համայնքապետարանում առկա ռիսկերը բացահայտելու և գնահատելու գործում,

3) տրամադրել վերահսկող մարմիններին Փարաքար համայնքի ղեկավարի կողմից ներկայացված ֆինանսական գործունեության և այլ կատարողականի վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատության և հավաստիության վերաբերյալ օբյեկտիվ կարծիք,

4) օժանդակել Փարաքար համայնքի ղեկավարին հասնելու իր առջև դրված նպատակներին՝ բարելավելով համայնքի համակարգերը և ծառայությունները,

5) իր ներկայությամբ նվազեցնել խարդախության, վատնումների և այլ չարաշահման դեպքերի տեղի ունենալու հավանականությունը,

6) ապահովել աշխատակիցների վարքագծի համապատասխանությունը սահմանված վարքագծի կանոններին:

III. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

9. Փարաքարի համայնքապետարանի ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը կազմվել է՝ հիմք ընդունելով աուդիտի ենթակա միավորների կողմից ներկայացված ռիսկերի գնահատումները, բացահայտված խնդիրները, ներկայացված առաջարկությունները և փոփոխությունները:

IV. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

10. Ներքին աուդիտի գործունեությունը կազմակերպվում է «Ներքին աուդիտի մասին» օրենքի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն և 2011 թվականի օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն հրամաններով սահմանված կարգով և մեթոդաբանությամբ: Փարաքարի համայնքապետարանում ներքին աուդիտի աշխատանքներն իրականացվում են հրավիրված անձի կողմից:

11. Ներքին աուդիտի հետագա զարգացման համար իրականացնվում է «Ներքին աուդիտի մասին» օրենքի, ներքին աուդիտի մեթոդաբանության, ներքին աուդիտի ստանդարտների և ներքին աուդիտորների վարքագծի կանոնների պահանջների կատարում: Նախատեսվում է յուրաքանչյուր տարի ներքին աուդիտորների մասնակցությունը լիազոր մարմնի կողմից կազմակերպվող շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին:

Հավելված 2
ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար
համայնքի ղեկավարի
2025 թվականի դեկտեմբերի 29-ի
թիվ 1032-Ա որոշում

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ

Տարի՝ **2026 թվական**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Փարաքարի համայնքապետարանի ներքին աուդիտի տարեկան ծրագիրը կազմվել է համաձայն «Ներքին աուդիտի մասին» օրենքի, ներքին աուդիտորների վարքագծի կանոնների, ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների, Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումների, Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցների:

2. 2026 թվականի տարեկան ծրագիրը կազմվել է Փարաքարի համայնքապետարանի ներքին աուդիտի 2026-2028 թվականների ռազմավարական ծրագրի հիման վրա: Ի տարբերություն ներքին աուդիտի ռազմավարական ծրագրի, որը սահմանում է հաջորդ երեք տարիների ընթացքում ընդգրկվելիք աշխատանքները, աուդիտի տարեկան ծրագիրը տրամադրում է տեղեկատվություն ներքին աուդիտի առաջադրանքների բնույթի վերաբերյալ, որոնք ակնկալվում են իրականացնել 2026 թվականի ընթացքում:

3. Տարեկան ծրագիրը սահմանում է 2026 թվականի ընթացքում Փարաքարի համայնքապետարանում իրականացվող ներքին աուդիտի առաջադրանքների անցկացման նպատակները և աշխատանքի շրջանակները, ինչպես նաև ժամանակացույցը՝ ըստ առանձին առաջադրանքների:

II. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

4. Ներքին աուդիտի 2026 թվականի տարեկան ծրագիրը նախատեսվում է իրականացնել հրավիրված անձի և անհրաժեշտության դեպքում ներգրավված փորձագետների միջոցով: Ներքին աուդիտորն ապահովում է տարեկան ծրագրի իրականացումը մասնագիտական գործունեության ստանդարտներին համապատասխան:

III. ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

5. Աուդիտի ռազմավարական ծրագրի իրականացման նպատակով ներքին աուդիտորի պարտականություններ կատարողը մշակում և Փարաքար համայնքի ղեկավարի քննարկմանն է ներկայացնում 2026 թվականի Փարաքարի համայնքապետարանի ներքին աուդիտի տարեկան ծրագիրը: Դիտողությունների և առաջարկությունների հիման վրա լրամշակված տարեկան ծրագիրը և դրա փոփոխությունները հաստատվում են ներքին աուդիտորի պարտականությունները կատարողի կողմից և վավերացվում Փարաքար համայնքի ղեկավարի կողմից:

IV. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

6. Փարաքարի համայնքապետարանի ներքին աուդիտորի պարտականությունները կատարողի հետ փոխկապակցված գործունեության տեսակներն են՝

1) շարունակական մասնագիտական վերապատրաստումը,

2) ներքին աուդիտի վերաբերյալ սեմինարների վարումը և դրանց մասնակցությունը:

V. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7. Փարաքարի համայնքապետարանում ներքին աուդիտի ստորաբաժանման, այդ թվում ստորաբաժանման ղեկավարի աշխատանքներն իրականացվում են հրավիրված անձի կողմից:

VI. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.Ներքին աուդիտի գործունեության արդյունքներն ամփոփվում են տարբեր տեսակի հաշվետվություններում: Կարևոր է, որ հաշվետվությունները լինեն արդյունավետ՝ Փարաքարի համայնքապետարանի գործունեության բարելավմանը նպաստելու և Փարաքար համայնքի համար հավելյալ արժեք ստեղծելու նպատակով:

9.Ներքին աուդիտորի պարտականություններ կատարողը պետք է Փարաքար համայնքի ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնի տարեկան հաշվետվություններ, որոնք ամփոփում են տարվա ընթացքում կատարած ներքին աուդիտի գործունեությունը:

10.Ներքին աուդիտորի պարտականություններ կատարողը պետք է Փարաքար համայնքի ղեկավարին ներկայացնի առաջադրանքի հաշվետվություններ, որոնք լինում են միջանկյալ, նախնական և վերջնական:

11.Ներքին աուդիտորի պարտականություններ կատարողը ներքին աուդիտի կանոնակարգի հաստատումից կամ փոփոխության ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում պետք է Լիազոր մարնին ներկայացնի հաշվետվություն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված 9-րդ հավելվածում ներկայացված 2-րդ ձևով:

12.Ներքին աուդիտորի պարտականություններ կատարողը պետք է տարեկան մեկ անգամ մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը ներկայացնի հաշվետվություն Լիազոր մարմնին ներքին աուդիտորների պաշտոնի նշանակման, փոփոխության, որակավորումների և վերապատրաստումների, ինչպես նաև ներքին գնահատումների վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված 9-րդ հավելվածում ներկայացված 3-րդ ձևով:

13.Ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվության բաղկացուցիչ մաս են կազմում նաև Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված 10-րդ հավելվածում ներկայացված աղյուսակները: Ներքին աուդիտորի պարտականություններ կատարողը պետք է գործունեության տարեկան հաշվետվության ամփոփագիրը և եզրակացությունները աղյուսակների հետ մեկտեղ մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը ներկայացնի Լիազոր մարմնին, որոնք կազմում են «Ներքին աուդիտի մասին» օրենքով սահմանված ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 դեկտեմբերի 2025 թվականի N 1033-Ա

ԳԵՂԱՄ ՍՈՒՐԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 4-րդ կետով, 10-րդ հոդվածի 5-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի սեփականատեր Գեղամ Սուրենի Հովհաննիսյանի 2025 թվականի դեկտեմբերի 29-ի N 6494 դիմումը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Սևանի փողոց թիվ 8 հասցեում գտնվող, Գեղամ Սուրենի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-094-0057-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման հողամասի վրա առկա 27.2 քմ մակերեսով շինության՝ բնակելի տան գործառնական նշանակությունը փոխել որպես՝ հասարակական խանութ, 8.4 քմ մակերեսով շինության՝ բնակելի տան գործառնական նշանակությունը փոխել որպես՝ հասարակական խանութ, 14.0 քմ մակերեսով շինության՝ բնակելի տան գործառնական նշանակությունը փոխել որպես՝ հասարակական խանութ, 7.8 քմ մակերեսով շինության՝ պահեստի գործառնական նշանակությունը փոխել որպես՝ սրբատեղի, հիմք ընդունելով «ՋԻՎԱՆ ԱՐՍԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված հողամասի հատակագիծը, իսկ հողամասում առկա 2.1 քմ մակերեսով նկուղը, 27.2 քմ, 8.4 քմ մակերեսներով խանութը, 19.2 քմ, 0.6 քմ և 16.4 քմ մակերեսներով ծածկերը թողնել ինքնակամ:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Փարաքարի համայնքի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հակոբ Միքաելյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 30
գ. Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 դեկտեմբերի 2025 թվականի N 1034-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 969-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով քաղաքացի Կարեն Սարուխանի Ավետիսյանի 2025 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 6446 դիմումը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2025 թվականի դեկտեմբերի 10-ի «Կարեն Սարուխանի Ավետիսյանի կողմից կատարած ինքնակամ շինությունների օրինականացման մասին» թիվ 969-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝

1) Որոշման նախաբանում «Ջիվան Հարությունյան Արսենի» բառերի փոխարեն կարդալ «Արմեն Սարիբեկյան» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Օ. ԱԽՎԵՐԴՅԱՆ**

2025 թ. դեկտեմբերի 30
գ. Փարաքար